

Գևորգ Գ. Հակոբյան

ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆ

Որոշ հիմնախնդիրներ և դրանց հնարավոր լուծումները*

Բանալի բառեր – դեմոկրատիա, ավտորիտարիզմ, կառավարիչ, իշխանություն, բռնակալ, ազատություն, արդարություն, ճշմարտություն, երջանկություն, վերահսկողություն, անարխիստական վերաբերմունք, ճշմարտության հակոտնյա, բարիքի բաշխում, դեմոկրատական հասարակություն:

Մուտք

Թեև դեմոկրատիան (իր տարատեսակներով) ամենաքննարկված հայեցակարգերից մեկն է, բայց սոցիալ-փիլիսոփայական մտքի շրջանակներում հանրահայտ է դեմոկրատիայի այսպես կոչված՝ «դասական» պարահոգքը. այն է՝ արդյո՞ք պետությունը դեմոկրատական կլինի, եթե քաղաքացիները, իրենց ազատ կամքով, ընտրեն բռնակալի իշխանությունը:

Նմանատիպ մի պարահոգք էլ առաջ է քաշում Կ. Պոպերը. «Եթե մենք չափազանց շատ ծրագրենք, եթե մենք չափազանց շատ իշխանություն տանք կառավարությանը, ապա ազատությունը կկորսվի, և դա կլինի ծրագրման ավարտը»¹: Սրանց առկայությունը լիովին բավական է, որպեսզի ակնհայտ լինեն **դեմոկրատիայի վտանգավոր կողմերը, որոնք նկատվում են նաև հայաստանյան ներկա իրականության մեջ**, սակայն դեմոկրատիան, իր բոլոր թերություններով ու խոցելի կողմերով հանդերձ, եղել և մնում է կառավարման լավագույն ձևը: Ուստի բնավ պատահական չէ, որ և՛ դեմոկրատիայի ջերմեռանդ պաշտպանները, և՛ նրա կատաղի քննադատները կենտրոնացել են դեմոկրատական առաջնորդի կամ վարչարարության վրա՝ տեսականորեն կանխելու համար դեմոկրատիայի վերածվելը կամ ամենաթողության, կամ բռնակալության:

ԺԸ (ԺԷ) ցարի, թիվ 2 (66), ամբիլ-հունիս, 2019
ՎԷՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 28.04.2019:
1 Popper K. R., The open Society and Its Enemies, Princeton, "Princeton University Press", 2013, p. 338.

1. Քննարկման օրյեկտի փոխարինում. անարխիստական վերաբերմունք

Այս խնդրադաշտում շարունակ քննարկվում է այն հարցը, թե ինչպե՞ս է հնարավոր կանխել դեմոկրատական վարչարարի՝ բռնակալի վերածվելը: Չնայած բազմաթիվ աշխատությունների առկայությանը, տեսաբանները գրեթե ընդհանրապես չեն կենտրոնացել այն էական հարցի վրա, թե ինչպիսի հասարակական վերաբերմունք ու մտայնություն պետք է գերիշխի դեմոկրատական պետության հասարակության մեջ՝ իշխանության նկատմամբ: Մենք գտնում ենք, որ այս վերջին հարցի լուծումը կարող է խիստ դրական անդրադարձ ունենալ դեմոկրատիայից բխող վտանգները կանխելու առումով: Դեմոկրատական երկրի քաղաքացիները կարող են կանխարգելել դեմոկրատիայի վերածվելը ավտոկրատիայի (ավտորիտարիզմի)՝ **անարխիստական վերաբերմունքի** ու դրան հետևող վարքի միջոցով:

Մարդկության պատմության մեջ եղել են անհատական ազատությունների ժամանակամիջոցներ, որոնք հնարավոր են եղել բացառապես վարչարարի իշխանատենչությունը վերահսկելու և հարատևորեն սահմանափակելու շնորհիվ: Սակայն այս միջոցառումներն իրացվել են տարերայնորեն, ուստի և արդյունքը, նույնպես, եղել է պատահական ու խիստ ժամանակավոր: Եթե վերը հիշատակված անարխիստական մտայնությունն ու վարքակարգը ի ցույց դրվեն համակարգված կերպով, իսկ դեմոկրատական կոչվող հասարակությունն այն յուրացնի ու հնարավորինս իրացնի, ապա կառավարություններն առավել մոտ կլինեն իրենց իրական առաքելությանը, իսկ դեմոկրատիան կունենա ավելի ամուր հիմքեր, քան ունեցել է մինչև այսօր:

2. Իշխանության բաշխման հիմնախնդրի շուրջ

Իշխանության (կառավարչի) գոյությունը կարող է արդարացված համարվել, եթե նրա առաքելությունն է՝ զերծ պահել քաղաքացիներին այն ամենից, ինչը կարող է խաթարել նրանց երջանկությունը: Իսկ դեմոկրատիան, ի թիվս այլնի, նախ և առաջ ենթադրում է շարքային քաղաքացու իշխանության շոշափելի առկայությունը կառավարության առաքելությունն իրականացնելու հարցում, այդ թվում նաև՝ երջանկության լինելիությանը խանգարող հանգամանքների միասնական ըմբռնման մշակումն ու իրացումը²:

Շարունակելով Պլատոնի պնդումն առ այն, որ ցանկացած մարդու դժբախտացնում է (բորբոքում, բարկացնում է) այն իրողության գիտակցումը, որ իր նկատմամբ անարդար վարմունք է իրականացվել³, կարելի է ասել, որ ցանկացած քաղաքացի այնքանով կլուսափի դժբախտ լինելուց, որքանով զգա կամ նկատի արդարության առկայությունն իրեն հասանելի հասարակական տարածքում: Իսկ արդարությունը միշտ կապ ունի բաշխման հետ. արդարության կամ անարդարության ուղղությամբ մարդիկ մտա-

2 Տե՛ս **Popper K. R.**, The open Society and Its Enemies, Princeton, "Princeton University Press", 2013, էջ 441 – 442:
3 Տե՛ս **Պլատոն**, Պետություն, երկեր չորս հատորով, հատ. IV, Եր, «Սարգիս Խաչենց. Պրինթինգթոն. Անտարես», 2017, էջ 167:

հոգվում են, որովհետև մարդկային կյանքը բաղկացած է հարատև բաշխման և վերաբաշխման գործընթացներից: Այսու՝ «Հասարակական բոլոր հակամարտությունները վերաբերում են բացառապես բաշխմանը»⁴: Եվ հենց բաշխման գործընթացում է, որ ծագում է արդարության հիմնախնդիրը. բաշխումն էլ, իր հերթին, սերտ կապ ունի իշխանության հետ: Իշխանության և բաշխման հարաբերությունները պարզելը շատ խնդրահարույց է, որովհետև բաշխվում են բարիքները, իսկ իշխանությունն ինքնին բարիք է: Ընդ որում, բացի այն, որ մարդն առնվազն բնագոյային մակարդակում հակված է դեպի իշխելն ու իշխանությունը, վերջիններս իրականացվում և ի ցույց են դրվում բարիքները բաշխելու գործընթացի մեջ: Վերջապես՝ բարիքին տիրապետելը նույնպես իշխանություն է, իսկ բարիքն էլ՝ իշխանության աղբյուր: Ուրեմն այն հարցը, թե բարիքը, բաշխումը և իշխանությունը ինչ հարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ, վերածվում է արատավոր շրջանի:

Այստեղ կարելի է բավարար համարել միայն այն ակնհայտ փաստը, որ **իշխանությունը, որը հանուն քաղաքացիների երջանկության կոչված է իրականացնելու բարիքների արդարացի բաշխում, պետք է նույնպես բաշխված լինի արդարացիորեն**: Ուստի ենթադրվում է քննարկումն առ այն, թե ինչպես է հնարավոր քաղաքացիներից մեկին (մի քանիսին) օժտել իշխանությամբ, որ դա լինի արդար:

3. Իշխանության գոյության անարդարացիությունը. անարխիզմի փաստարկները

Դեմոկրատական երկրների սահմանադրություններում և/կամ համապատասխան օրենսգրքերում առաջադրված են այնպիսի պայմաններ, ըստ որոնց տվյալ պետության քաղաքացիների բացարձակ մեծամասնությունից յուրաքանչյուրն իրավունք ունի ընտրվելու պետության կառավարիչ (նախագահ, վարչապետ, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության անդամ և այլն), որով էլ օրենքի ուժով օժտված կլինի համապատասխան իշխանությամբ՝ սեփական համաքաղաքացիների նկատմամբ: Իսկ իշխանությունը մեկի նկատմամբ հնարավոր է բացառապես նրա ազատության հաշվին:

Անկախ այն բանից՝ սա տեղի է ունենում լռելյայն թե տեքստի բերված, հասարակական դաշինքի ձևով, անկախ այն բանից, թե ազատության ինչպիսի քանակություն է սահմանափակվում, միևնույն է՝ այս իրողությունը բավարար է, որ ի հայտ բերվի անարխիզմի ընդդիմացումը, ըստ որի ցանկացած իշխանություն ինքնին անարգանք և անարդար վարմունք է մարդու նկատմամբ:

Ըստ անարխիզմի (բոլոր տարատեսակների)՝ ազատությունը բացարձակ, անփոխարկելի և համարժեքը չունեցող արժեք է, ուստի հնարավոր ոչ մի իշխանություն չի կարող առաջարկել ինչ-որ մի բան, որը կկարողանա հարաբերելի և սակարկելի լինել ազատության նկատմամբ: Ո՛չ անվտանգությունը, ո՛չ բարեկեցությունը, ո՛չ նույնիսկ երջանկությունն ու Աստ-

⁴ Walzer M. L., Spheres of Justice, A Defense of Pluralism and Equality, Printed in the United States of America, "Basic Books", 1983, p. 11.

ված⁵, և ո՛չ էլ այս բոլորը միասին հնարավոր չէ դնել կշեռքի նժարին՝ որպես ազատությանը հակակշիռ կամ դրան փոխարկելի արժեք: Ազատությունը հիմնարար և անվերապահ արժեք է, որը չի կարող դրվել այլ ցանկացած արժեքի կողքին կամ մտնել ինչ-որ աստիճանակարգության մեջ, եթե նույնիսկ բարձրագույն տեղը հատկացված լինի հենց ազատությանը:

Անարխիզմի հայրերից Պրուդոնի համոզմամբ, եթե որևէ հասարակության մեջ ազատությունը բացարձակ առաջնայնություն չունի, ապա այդտեղ չի կարող լինել ոչ մի արդար գործողություն. առևտրական կամ վարձու աշխատանքային հարաբերություններն ինքնըստինքյան տեղի կունենան ազատի և անազատի (հարուստի և ունեզուրկի) միջև: Զինվորը, որն ազատորեն չի ծառայում հանուն իր հայրենիքի սիրո, դառնում է զինակիցների և մարտական ողջ կառույցի թշնամին: Նույն դրության մեջ են հողագործը, արտադրողը և բոլորը, ովքեր աշխատում ու ապրում են այսպիսի հասարակության մեջ⁶: Ուրեմն՝ «... ազատությունը բացարձակ արժեք է, քանի որ անթափանցելիությունը խնդիր է մարդու համար՝ գոյության անհնարինություն (sine qua non)»⁷:

Իհարկե, անարխիստները հասկանում են, որ ազատությունը պետք է ունենա «հենարաններ». անարխիզմը որակվում է՝ որպես «... կատարյալ ցանկալի, սակայն բացարձակապես անհնարին իրադրություն»⁸: Այս պատճառով էլ արդարության կողքին, որպես ազատության նման բացարձակ արժեք, հիշատակվում են հավասարությունը և անվտանգությունը⁹: Բայց սրանից անարխիզմի՝ ազատության բացարձակ առաջնայնության ըմբռնումը չի փոխվում, որովհետև անարխիստական ազատությունը միշտ ընդդեմ իշխանության է. «Անարխիզմը պնդում է, որ կյանքը կարելի է ապրել առանց իշխանության առկայության ...»¹⁰: Եվ երբ Բակունինը եզրակացնում է, թե «... ազատությունն առանց սոցիալիզմի արտոնյալություն է, անարդարություն, իսկ սոցիալիզմն առանց ազատության ստրկություն է և անասնական վիճակ»¹¹, շարունակվում է ազատության վերը մեկնաբանված ըմբռնումը:

Այն, որ Պրուդոնն ընդունում է հավասարությունն ու անվտանգությունը որպես ազատությանը կից բացարձակ արժեքներ, հակաիշխանական հայեցակարգային հետևողականության արդյունք է, ըստ որի բոլորը հավասար են, «... միակ հեղինակությունը օրենքն ...» է, իսկ «Ազատությունը անարխիա է»¹²: Այս նույն հետևողականությունն առկա է նաև Բակունինի հայեցակարգում. «... մենք վճռականորեն մերժում ենք հասարակության կազմակերպման ցանկացած այնպիսի փորձ, որը լինելով հեռու ինչպես անհատական, այնպես էլ միութենական ազատություններից, կպահանջի ինչ-որ կանոնակարգման հեղինակություն: Հանուն ազատության, որն ընդունում ենք որպես ցանկացած կազմակերպության միակ օրինական ստեղծագործական

5 Տե՛ս **Бакунин М. А.**, *Философия. Социология. Политика*, Москва, изд. «Правда», 1989, էջ 44:

6 Տե՛ս **Proudhon P. J.**, *What is Property?*, Cambridge, "Press of John and Son", 1876, էջ 133 – 134:

7 Նույն տեղում, էջ 52:

8 **Kinna R.**, *Where to Now? Future Directions for Anarchist Research*, The Continuum Companion to Anarchism, New York, "Continuum International Publishing Group", 2012, p. 316.

9 Տե՛ս **Proudhon P. J.**, *What is Property?*, Cambridge, "Press of John and Son", 1876, էջ 52:

10 **Newman S.**, *Research Methods and Problems: Postanarchism*, The Continuum Companion to Anarchism, New York, "Continuum International Publishing Group", 2012, p. 41.

11 **Бакунин М. А.**, *Философия. Социология. Политика*, Москва, изд. «Правда», 1989, с. 42.

12 **Proudhon P. J.**, *What is Property?*, Cambridge, "Press of John and Son", 1876, p. 282.

սկզբունք, մենք միշտ կընդվզենք ընդդեմ այն ամենի, որը դուրսն էին նման կլինի պետական սոցիալիզմի կամ կոմունիզմի»¹³: Այդ պատճառով «... պետությունը պետք է տարալուծվի հասարակության մեջ, որն ազատորեն կազմակերպված է արդարության հիմունքների վրա»¹⁴: Վերջապես՝ «Ողջ մարդկության զարգացման վերջնակետային սահմանն ազատությունն է»¹⁵:

4. Բարիքների անարդար բաշխվածությունը հասարակության և իշխանության միջև

Անարխիստական այս փաստարկներն ու հայտարարությունները կարելի է համարել իռացիոնալ և/կամ ապրիորի¹⁶ տրվածություն, որոնց հետ հնարավոր է պարզապես համաձայնել կամ մերժել նույնքան իռացիոնալ և ապրիորի հիմունքներով, սակայն այն, որ դեմոկրատական (և ո՛չ միայն) կառավարչի և իր համաքաղաքացիների միջև կա բարիքների բաշխվածության ծայրահեղ անհամաչափություն, կարելի է որակել որպես նեցեսիտարիստական (անհրաժեշտական)¹⁷ անարդարություն. այսպես՝

ա) քաղաքացիները կառավարչին վճարում են իրենց պետության ամենամեծ աշխատավարձը, իսկ **կառավարիչը**, լավագույն դեպքում, կարող է ապահովել քաղաքացիների աշխատավարձերի համաչափ բաշխվածությունն ըստ ընդունված սկզբունք(ներ)ի,

բ) քաղաքացիները կառավարչին ապահովում են առաջնային սպառման բոլոր բարիքներով (կացարան՝ կոմունալ ծախսերով և այլն) և որակական առումով՝ հնարավոր լավագույնը: Իսկ **կառավարիչը**, լավագույն դեպքում, կարող է իրացնել քաղաքացիների՝ աշխատանքի դիմաց բարիքների ձեռքբերման գործընթացի ճշգրիտ ու անխափան իրագործումը,

գ) քաղաքացիները լիովին լուծում են կառավարչի առողջապահական կարիքները (այս դեպքում, թերևս, մատուցվում է բառացիորեն լավագույնը), իսկ փոխարենն ակնկալվում է քաղաքացիների միայն որոշ մասի և որոշ կարիքների անվճար (որոնք դրա դիմաց կան աշխատել են, կան աշխատելու են, կան ուղղակի չեն կարող աշխատել, ուստի վարձահատույց են լինում համաքաղաքացիները) բավարարումը, իսկ մնացածը կարող են ակնկալել՝ վճարի դիմաց համարժեք (որակական) գործողությունների ապահովում:

Այս շարքը կարելի է շարունակել՝ վկայակոչելով կառավարչին տրամադրվող անվտանգությունը, տրանսպորտը, ֆիզիկական տեսքի ներկայանալի խնամքի միջոցները, ժամանցի բարձրորակությունը և այլն, սակայն եղածն էլ բավարար է ցույց տալու համար, թե օբյեկտիվորեն (նույնիսկ իդեալական տարբերակում) որքան անարդար է տեղի ունենում բարիքների բաշխումը կառավարչի և համաքաղաքացիների միջև:

Բարիքների բաշխման այս իրողությունն անարդար է ոչ միայն բարիք-

13 Бакунин М. А., Философия. Социология. Политика, Москва, изд. «Правда», 1989, с. 40.

14 Նույն տեղում, էջ 41:

15 Նույն տեղում, էջ 67:

16 A priori – լատիներենից բառացի թարգմանվում է՝ ի սկզբանե, այսինքն՝ նախքան փորձը: Իմացաբանական եզրույթ է, որը հատուկ մշակման է ենթարկվել է: Կանտի կողմից: Կանտը և այլք ապրիորի են անվանում այն ամենը, ինչը չի կարող տրված լինել հնարավոր փորձում:

17 Necessarius – լատիներենից բառացի թարգմանվում է՝ հարկավորություն, պարտադրություն: Կ. Պոպերը «նեցեսիտարիստական» է որակում հեգելյան ազատությունը, որն ըստ Պոպերի կեղծիք է:

ների քանակի և որակի առումով, այլև հենց բուն գործընթացի կառուցվածքով. համաքաղաքացիները միշտ վճարում են նախապես, իսկ «ճառայությունը» մատուցվում է վճարից որոշ ժամանակ անց: Քաղաքացին «պարտատերն է», իսկ «նուրհակի»՝ Սահմանադրության պահապանը և պարտքը մարելու երաշխավորը միշտ նույն «պարտապանն» է՝ **կառավարիչը**:

Այսպիսով, համաքաղաքացիները, ընտրելով և նշանակելով **կառավարիչ**, «վարձու աշխատանքի» են վերցնում իրենցից մեկին, որը ոչ մի կերպ, օբյեկտիվորեն չի կարող կատարել այնպիսի որակի և քանակի աշխատանք, որը համարժեք կլիներ քաղաքացիների վճարին: Եվ եթե **կառավարիչը** նույնիսկ ինչ-որ հրաշքով այնպես ու այնքան աշխատի, որ կարողանա բոլորի նկատմամբ արդար լինել և լիովին արդարացնի բոլոր քաղաքացիների հույսերը (մի բան, որ երբեք հնարավոր չէ), միևնույն է՝ նա կատարած կլինի իր ստացածից պակաս, որովհետև քաղաքացիները կանխավ նրան «վճարել» են իրենց վստահությունը: Ասենք թե՛ **կառավարիչն** էլ վստահության դիմաց եղել է արդար, սակայն նրա կատարած աշխատանքը շարունակում է պակասավոր լինել, որովհետև վճարման պահի և դրա դիմաց իրականացրած աշխատանքների միջև ժամանակ է ընկած: Իսկ ժամանակն անդառնալի է և խիստ թանկ:

Այսու՝ փաստորեն համաքաղաքացիներն իրենցից մեկի հետ իրականացնում են մի գործարք, որը սկզբունքորեն (իսկ գործնականում՝ առավել ևս) արդար լինել չի կարող:

5. Կառավարչի անհավասարակշիռ հոգեկանը և բարոյականության անհնարինությունը

Այստեղ տրամաբանական հարց է առաջանում. իսկ ո՞վ է տվյալ քաղաքացին որպես անձ, որը հասնում է այնպիսի դրության, որ քաղաքացիները հենց իր հետ են իրականացնում այդ անարդար գործարքը, և ոչ մեկ ուրիշի: Առհասարակ՝ ցանկացած քաղաքական գործիչ առնվազն՝ իր պնդմամբ ցանկանում է իրականացնել արդարություն, քանզի «... **քաղաքականը սաղմնավորվում է փիլիսոփայականում և մեռնում իրավականում՝ ամրագրման միջոցով** (ընդգծումը մերն է – Գ. Հ.)»¹⁸: Իսկ Ա. Բեռլինի պնդմամբ՝ «Քաղաքական տեսությունը բարոյական փիլիսոփայության ճյուղ է, որը սկսում է քաղաքական հարաբերությունների ոլորտում բարոյական հասկացության հայտնագործումից կամ վկայակոչումից»¹⁹, այսու՝ քաղաքական գործունեությունն էլ բարոյական նորմերի իրականացման ընթացք է: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այն քաղաքացին, որը ցանկանում և ընտրվում է կառավարիչ՝ կան չի կարող այնքան խոր մտածել, որ հասկանա, թե ինքը գնում է անարդար գործարքի՝ հայտարարելով, թե պայքարում է հանուն ինչ-որ արդարության (բարոյականի), կան կարող է հասկանալ, սակայն հասկանալով հանդերձ գնում է այդ քայլին, կան էլ երկուսը միասին. չի հասկանում, սակայն, եթե հասկանար էլ, միևնույն է՝ գնալու էր այդ անարդար

18 Այս մասին մանրամասն, տե՛ս **Յակոբեան Գ. Գ.**, Քաղաքականության և իրավունքի գոյարանական հիմքերը, «Միոն», պաշտօնաթերթ էրուսաղեմի Հայ Պատրիարքություն, Երուսաղեմ, «Տպարան Սրբոց Յակոբեանց», 2017, յուլիս – դեկտեմբեր, էջ 48:

19 **Berlin I.**, Two Concept of Liberty, New York, "Oxford University Press", 2002, p. 168.

քայլին:

Լորդ Աքթոնը պնդում է. «Իշխանությունը տանում է այլասերման, իսկ բացարձակ իշխանությունը այլասերում է բացարձակորեն»²⁰: Այս պնդումը՝ իր փաստարկներով հանդերձ, արվել է մոտ մեկ ու կես դար առաջ: Այն ենթադրում է, որ մարդը հակվում է դեպի այլասերումը իշխանություն ունենալուց հետո (իշխանական համակարգի ճնշման ներքո): Սակայն, հաշվի առնելով ներկա մի շարք իրադրություններ, ի տարբերություն Աքթոնի, կարելի է ասել, թե ժամանակակից մարդը, որը հակված է իշխանության, արդեն իսկ հակված է այլասերության՝ չասելու համար, թե արդեն իսկ այլասերված է: Եթե նույնիսկ մի հայանցիկ դիտարկման ենթարկենք այն ճանապարհը, որն անցնում է մերօրյա մարդը իշխանություն ձեռք բերելու համար, վերն ասվածը հստակորեն կհիմնավորվի. սկզբունքորեն հնարավոր չէ ձգտել և հասնել իշխանության՝ առանց հանրայնորեն պաշտպանելու ինչ-որ մի տեսակետ, որի հետ առնչություն ունեցող խնդիրը հասարակական լայն հնչեղություն է ստացել: Հանրայնորեն հանդես գալով և պաշտպանելով կամ հերքելով ինչ-ինչ հայեցակետեր՝ ենթադրյալ քաղաքական գործիչ-հրապարակախոսը, կամա թե ակամա, անհրաժեշտաբար արժանանում է հասարակության մի ստվար գանգվածի քննադատությանը: Եթե ժամանակին, ասենք՝ Աքթոնի օրոք, դիրքորոշում հայտնող հրապարակախոսին պատասխանելու (քննադատելու) հնարավորություն ուներ միայն մեկ այլ հրապարակախոս, իսկ տվյալ քննադատությունն էլ հանրայնացվում էր տպագիր մամուլի միջոցով, ապա այսօր ինտերնետային սոցկայքերի միջոցով կարծիք հայտնելու հնարավորություն ունեն բոլորը: Այս «բոլորի» մի զգալի մասը, չլինելով մասնագետ, ենթադրյալ հրապարակախոսին մեղադրում է ամենափոքրիկ գանցանքից մինչև ամենասարսափելի հանցագործությունների մեջ: Եվ որովհետև նրանք իրենց գրառումներում գրեթե ոչ մի առումով կաշկանդված չեն, ցանկության դեպքում առանց վարանելու հասցնում են ծայրահեղ վիրավորանքներ, ենթարկում ծաղր ու ծանակի: Իշխանության ձգտող մարդը կամ կարողանում է լռել ու մոռացության մատնել այդ ամենը, կամ վիրտուալ մարտի է բռնվում բոլորի հետ: Այս գործընթացը կարող է տևել տարիներ:

Բացի սրանից, ժամանակին իշխանության ձգտող հրապարակախոսին հակադարձում էր «մասնագետ»՝ մեկ այլ հրապարակախոս, որի արտահայտած տեքստն անցնում էր խմբագրական քննություն, ուստի այս հրապարակախոսները միմյանց հետ բանավիճում էին միևնույն «լեզվով»՝ քիչ թե շատ խուսափելով բեկոնյան «Շուկայի կուռքից»: Ներկայիս հրապարակախոսը ստիպված է խոսել անթիվ-անհամար «լեզուներով». մի իրողություն, որը նույնպես, գործնականում անհրազործելի է: Ուստի, իշխանության ձգտող հրապարակախոսը պարտավորված է լինում ընտրել ամենամեծ տարածում ունեցող քաղաքական միջերը, ու դրանց շրջանակներում անընդհատ խոսել ենթադրյալ լսարանի հետ՝ թույլ չտալով, որ հասարակությունն իրեն մոռանա: Վերջապես, եթե ժամանակին բանավիճային տեքստը սահամանափակված էր հրատարակության պարբերականության ժամկետներով, ապա ներկայիս հրապարակախոսը ստիպված է խոսել ոչ միայն համոզիչ (ձշմարիտն ու գեղեցիկը այս հարցում միայն հարաբերական գործիքներ են), այլև՝ շատ:

ՀԻՄՆԱՔԱՎՈՒՆԵՐ

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 2 (66), ամբիլ-հունիս, 2019

ՎԿԱ համահայկական հանդես

20 Acton J. E. D., Essays on Freedom and Power, Boston, "The Free Press", 1949, p. 364.

Այսպիսով՝ հնարավոր է արդյոք, որ նման թոհուրոհի միջով անցած անձն ունենա հավասարակշիռ հոգեվիճակ. առավել հավանական չէ՞ արդյոք, որ նա լինի Նիցցե – շելերյան ռեսենտիմենտի բարոյական սալջարդների կրիչ՝ իր ողջ պայթյունավտանգությամբ:

6. Դեմոկրատական ընտրությունների փաստացի խնդրահարույց լինելը

Դեմոկրատական կառավարման մեջ ընդհանրապես որոշիչ է ընտրազանգվածի ձայնը, իսկ գործնականում այս նույն ընտրազանգվածի խարված լինելու հավանականությունը, որպես կանոն, միշտ շատ ավելի մեծ է, քան ճիշտ ընտրություն կատարելը. մրցակցության լայնածավալությունը ստիպում է, որպեսզի իշխանական թեկնածուներն ընտրողներին ներկայանան համակողմանի դրականորեն, այսինքն՝ լինեն խելացի, իմաստուն, տեղեկացված (օժտված լինեն մտավոր զարգացածության մարդկությանը հայտնի բոլոր դրական հատկանիշներով): Նրանք «ստիպված են» լինել նաև պարկեշտ, լավ ընտանիքի անդամ (ցանկալի է՝ ծնող), ընկերասեր, հայրենասեր, մարդասեր և այլն: Այս պահանջների ցանկը պարզապես անվերջ է, և հենց այդ անվերջությունն էլ փաստում է այն, որ ոչ մի մահկանացու, որքան էլ ցանկանա, առնվազն ֆիզիկապես չի կարող հասցնել լինելու, ասենք, լավ ընտանիքի հայր, խոր գիտելիքներով զինված մտավորական և միշտ իր ժողովրդի կողքին, «փողոցում պայքարող» հերոս: Ի հակադրություն այս ամենի, նա կարող է և դառնում է մեդիահերոս: Մեդիան իր «հերոսին» ներկայացնում է այնպիսին, ինչպիսին որ ընտրողները կուզեին լինել իրենց **կառավարիչը**: Եվ քաղաքական գովազդի միակողմանիության ազդեցության տակ ընտրազանգվածն անտեսում է այն փաստը, որ մարդը պարզապես չի կարող լինել տաղանդ բոլոր ոլորտներում: **Ճիշտ հակառակը, կատաղի քննադատը կարող է թույլ դեկավար լինել և թույլատրել այնպիսի արատավոր գործողություններ, որոնցից շատ ավելի աննշաններն ինքը նախկինում քննադատել է:** Թեպետ չի բացառվում, որ հանդիպեն այնպիսի առաջնորդներ, որոնցում համադրված լինեն և՛ **հռետորը**, և՛ **կառավարիչը**: Սակայն այս **հռետոր-կառավարիչը** կարող է չունենալ համապատասխան բարոյական նկարագիր: Եվ հակառակը՝ պատմությունը բազմիցս է «փորձել» ստվերել բարոյական մեծ արժեքների դավանորդների, որոնք հետագա սերունդներին հայտնի են դարձել պատահականորեն:

Եվ այսպես, բոլոր այն մտածողները, որոնք Պլատոնի առաջնորդությամբ պնդում են, թե «... պետք է իշխեն լավագույնները»²¹, սխալվում են այն պարզ պատճառով, որ կամ «լավագույններ» չկան, կամ նրանք երբեք իշխանության գալ չեն կարող, որովհետև ընտրությունները միշտ իրականանում են անարդար. **արդար ընտրությունները նախևառաջ ենթադրում են օբյեկտիվ հնարավորությունների հավասարություն**: Սակայն որքան էլ մարդկության լուսավորյալ ներկայացուցիչները ձգտել են, միևնույն է՝

21 Պլատոն, Պետություն, երկեր չորս հատորով, հատոր IV, Եր., «Սարգիս Խաչենց. Պրինթինգոն. Անտարես», 2017, էջ 128:

ցայսօր եղած բոլոր հասարակություններում էլ առկա են տոհմապաշտական մտայնություններ, ուստի այն անձը, որի արյունակցական կապերը լայն են, առավելություն է ստանում իր մրցակիցների նկատմամբ: Երկրորդ՝ առաջադրվելու համար հստակ ամրագրված գումար պետք է մուծվի պետությանը, իսկ մրցակցությունը կազմակերպելու համար հարկավոր են ոչ բոլորին մատչելի ֆինանսական ռեսուրսներ. այս ֆինանսների չափը նույնպես ծանրակշիռ ազդեցություն ունի ընտրությունների ելքի վրա: Իսկ «ամենաարդար» պետության մեջ ապրող լավ ընտանիքի լավ հայրը, որը, բացի ընտանիքի անդամների հոգսերը հոգալուց, հնքնակրթության վրա ծախսում է բավական մեծ գումարներ, երբեմն կատարում է բարեգործություն, թեև հազվադեպ, սակայն ունենում է նաև ժամանցային ծախսեր: Ինչպե՞ս կարող է նա ձեռք գցել այդ գումարը, եթե աշխատում է, ասենք, որպես մանկավարժ կամ բանվոր և վարձատրվում դրան համապատասխան: Ուրեմն, առաջադրվելու է կան մեծահարուստը (ամենայն հավանականությամբ՝ գործող իշխանության հետ կապված անձը), կան փնտրվելու է ֆինանսական հովանավոր: Իսկ ֆինանսական հովանավորները կհետապնդեն բացառապես իրենց շահերը, ուստի առաջադրվել ցանկացողը կան կխոստանա վերապահումներ ինչ-ինչ հարցերում և խոստումը կատարելով անարդարություն կգործի, կան էլ կխոստանա, սակայն խոստումը չի կատարի ու կրկին անարդարություն կգործի: Հակառակ դեպքում առաջադրվելու հնարավորություն չի ունենա, իսկ եթե այնուամենայնիվ առաջադրվի, ապա նյութական միջոցների սղության պատճառով կպարտվի: Նա կարող է նյութական միջոցների սղությունը փոխհատուցել անձնական օժտվածությամբ և ավելի մեծ ջանքերի գործադրմամբ, քան գործադրում են ֆինանսապես ապահովված մրցակիցները, իսկ սա ինքնին անարդարություն է: Այսու, նույնիսկ «ամենաարդար» պետության դեպքում արդար ընտրություններ հնարավոր չեն: Վերջապես՝ քաղաքացիներն արդարացիորեն ցանկանում են, որ իրենց **կառավարիչը** ոչ միայն լինի, այլև միշտ ներկայանա այն բարոյական և գեղագիտական կերպարով, որը ցանկալի է իրենց: Որովհետև, կրկին օբյեկտիվ պատճառներով, քաղաքական (և ո՛չ միայն) լրահոսը խիստ հաճախակի է տեղեկություններ հաղորդելու տվյալ կերպարի, նրա շրջապատի, վարքի, բարքի և կեցվածքի մասին, իսկ մարդն անհրաժեշտաբար ունի ընդօրինակելու հատկություն: Ընդօրինակելու հատկությունն առավել սուր կերպով է արտահայտված անչափահասների մոտ, իսկ քաղաքացիներն առնվազն բնական հակվածություն ունեն հոգ տանելու իրենց երեխաների մասին: Քաղաքացիների հույսերն այստեղ էլ չեն կարող արդարանալ, որովհետև սկզբունքորեն հնարավոր չէ ընդօրինակելի մարդու իրական լինելը: Ընդօրինակման հարցում, եթե ակնկալվում է ցանկալի արդյունք, պետք է ցուցաբերվի ընտրողական մոտեցում, սակայն լրատվամիջոցներն այդ մոտեցումը ցույց տալ չեն կարող:

7. Կառավարիչի այլացումը

Կառավարիչը, որը մինչ այդպիսին դառնալը քաղաքացիներից մեկն էր, **կառավարիչ** դառնալուց անմիջապես հետո դադարում է պարզապես քաղաքացիներից մեկը լինելուց. նա քաղաքացիներից մեկը չէ այլևս ո՛չ մի

առումով: Ո՛չ իրավունքներն ու պարտականությունները, ո՛չ ազատությունն ու պատասխանատվությունը, և ո՛չ մի այլ արտաքին – օբյեկտիվ իրողություն այլևս նույնը չեն: Նույնը չէ նաև հենց ինքն անձնապես, սակայն եթե իդեալական տարբերակում, գերմարդկային ճիգերի շնորհիվ նորընտիր **կառավարիչը** մնա անձնապես նույնը, միևնույն է՝ այլ է նրա զբաղմունքը, այլ է նրա ողջ կենցաղը, այլ է նրա աշխարհը: Ինքը, որպես այդպիսին, այլևս չկա ընդհանրապես²². Կա միայն նրա կերպարը, որը կադապարվել է «կառավարչ» լեզվամտային թաղանթում: Թե ինչ հարաբերությունների մեջ են այս «կառավարիչ» լեզվամտային– ներկայացուցչական թաղանթն ու բուն անձը առանձին համակողմանի ուսումնասիրություն պահանջող խնդիր է: Ուստի այստեղ կարձանագրենք միայն, որ սրանք իրար նույնական չլինելով ստիպված են լինում նույնականանալ և գտնվում են հարատև հակամարտության մեջ: Այսու՝ կառավարչի հոգեվիճակի ներդաշնակ լինելը առնվազն խիստ կասկածելի է:

Ն. Մաքիավելին, ով միշտ չէ, որ արժանանում է դրական գնահատականի, արձանագրել է մի էական փաստ. այն է՝ **կառավարիչն** ուզի թե չուզի միշտ յուրահատուկ կենսակերպ ու վարքագիծ պիտի ունենա²³: Այդ կենսակերպից ուղղակիորեն անբաժանելի են սուտն ու բռնությունը, խարդավանքն ու նենգությունը: Այս ամենը միայն հետմիջնադարյան Իտալիայում չէր, որ տարածված էր. սա ոչ միայն շարունակվում է ներկայումս, այլև հաճախ համարվում է արդարացի կամ արդարացնելի. «Ստերը, որպես անհրաժեշտ և արդարացնելի գործիքներ, մշտապես ներառված են եղել ոչ միայն քաղաքական գործիչների և դեմագոգների զբաղմունքներում, այլ նաև՝ վարչարարների»²⁴: Ուրեմն դեմոկրատական **կառավարիչը** անհրաժեշտաբար դիմելու է նաև ստին ու խարդավանքների այլ միջոցների:

8. Ճշմարտության հակոտնյան. ոչ ճշմարիտի և անարդարի լեզիտիմ համարվելը

Վերը նկարագրված անարդրությունները օրինական են, որովհետև ամբողջոված են համապատասխան օրենսգրքերում (կամ կմեկնաբանվեն՝ չհակասելով օրենքին): Այս ամենը նաև լեզիտիմ է, որովհետև ողջախոհությունը պարտադրում է, որ այլ տարբերակ չկա:

Այս նեցեսիտարիստական արդարությունը կեղծ է, որովհետև այստեղ գործում է միջոցների թույլատրված նպատակը՝ մաքիավելիզմի այլասերված տարբերակով: Այլասերված, որովհետև մաքիավելիզմն անկեղծ է արդարությունն իսպառ անտեսելու հարցում, իսկ սա, լինելով անարդար, հավակնում է լեզիտիմանալ և լեզիտիմանում է որպես արդար: Ուստի սա ճշմարտության հակոտնյայի տիպական օրինակ է, որովհետև արդարությունը կարող է ըմբռնվել որպես նորմատիվ ճշմարտության տեսակ²⁵, ասենք՝ անկեղծության, ազնվության, ուղղամտության, շիտակության և այլնի կող-

22 Տես **Sorokin P. A.**, Social And Cultural Mobility, New York, "Harper & Brothers", 1941, էջ 194 – 195:

23 Տես **Մաքիավելի Ն.**, Տիրակալը, Եր., Հեղինակային հրատարակություն, 2010, էջ 34 – 36:

24 "Truth and Politics", Truth: Engagements Across Philosophical Traditions, edited by **Medina J.** and **Wood D., Arendt H.**, Cornwall, "Blackwell Publishing", 2005, p 295.

25 Տես "General Introduction", Truth: Engagements Across Philosophical Traditions, edited by **Medina J.** and **Wood D., Arendt H.**, Blackwell Publishing, 2005, էջ 3:

քին: Իսկ ճշմարտության հակոտնյան հնարավոր է ճանաչել և սահմանել միայն հակադրելով ճշմարտությանը՝ Ջ. Ս. Միլի առաջարկած հնարի նմանաբանությամբ, ըստ որի՝ «... ինչպես բարոյական այլ ատրիբուտները, այնպես էլ արդարությունը լավագույնս սահմանվում է իր հակադրի միջոցով»²⁶: Եվ որովհետև «... ճշմարտության հակոտնյան ունի հարյուր հազարավոր կերպարանք և չունի սահմաններ»²⁷, ուստի այն պետք է սահմանել համատեքստային կամ իրադրությային կերպով. այսու՝ **ճշմարտության հակոտնյան ճշմարտության այն հակադրությունն է, որը լեգիտիմացած է ճշմարտության տեղում՝ լինելով և ճանաչվելով որպես սխալ**:

Վերոնկարագրյալ իշխանության և այլ բարիքների բաշխման իրողությունները որակվեցին որպես ճշմարտության հակոտնյաներ, որովհետև դիսկրիպտիվ²⁸ ճշմարտությունից (այն է՝ այլ կերպ հնարավոր չէ) բխեցվում է նորմատիվ²⁹ ճշմարտություն (այն է՝ քանի որ այլ կերպ հնարավոր չէ, ուստի հենց այսպես էլ պետք է լինի), որը չլինելով արդար, այսինքն՝ նորմատիվ ճշմարտություն, ճանաչվում է որպես սխալ, բայց լեգիտիմ:

Եզրակացություններ: Հասարակության անարխիստական և պահանջատիրական մտայնությունը՝ դեմոկրատիայի առիավատյա

Փաստացի ստացվում է, որ արդարության հրամայականի տակ ի հայտ եկած կառավարման ձևը՝ դեմոկրատիան, առաջ է բերում մի շարք անհաղթահարելի անարդարություններ: **Բայց մարդկությանը դեռևս հայտնի չէ կառավարման այնպիսի մի համակարգ, որն ավելի ճշմարտամոտ լինի արդարությանը, քան դեմոկրատիան է**: Ուստի չկա մեկ այլ տարբերակ, բացի քաղաքացիների հստակ դիրքորոշումը՝ հարատևորեն վերահսկելու կառավարությանը, որովհետև «... ինչպես տնտեսական իշխանությունը, այնպես էլ բոլոր իշխանությունները և քաղաքական իշխանությունն առավել ևս, վտանգավոր են»³⁰: Ուստի «... բոլոր քաղաքականությունների ամենահիմնային խնդիրը վերահսկելն է վերահսկողներին՝ իշխանության վտանգավոր այն կուտակմանը, որն ինքն իրենից ներկայացնում է պետությունը»³¹:

Դեմոկրատական հասարակությունները պետք է գիտակցեն, որ իրենք ազատված չեն կառավարման հոգսից, ինչպես այդ հոգսից ազատ են ավտորիտար հասարակության անդամները: Այս վերջինները կարող են իրենց երջանիկ կամ դժբախտ համարել՝ կախված կառավարչի գործունեությունից, սակայն կառավարման հոգսից պարտավոր են «ազատ» լինել: Ի տարբերություն ավտորիտար հասարակությունների՝ «... դեմոկրատիայում մենք

26 **Stuart J. M.**, Utilitarianism, Kitchener, "Batoche Books", 2001, p. 42.

27 **Մինտեն Մ.**, Փորձեր, Եր., «Հայաստան», 1991, էջ 39:

28 **Descriptio** – լատիներենից բառացի թարգմանվում է՝ գրել: Գիտափիլիսոփայական եզրույթ է, որով նշանակվում է հայեցակարգի (դատողություն, տեսություն և այլն) որակը, այն է՝ նկարագրող, ի հակադրություն՝ նորմատիվի:

29 **Normalis** – լատիներենից բառացի թարգմանվում է՝ ուղիղ, կարգավոր, չափավոր: Գիտափիլիսոփայական եզրույթ է, որով նշանակվում է հայեցակարգի (դատողություն, տեսություն և այլն) որակական բնութագիրը, այն է՝ կարգավորող:

30 **Popper K. R.**, The open Society and Its Enemies, Princeton, "Princeton University Press", 2013, p. 338.

31 Նույն տեղում, էջ 337:

ձեռքներիս ունենք հրեշներին վերահսկելու բանալիները»³², սակայն զրկված ենք այդ վերահսկումից ազատ լինելու «բանալիներից» այն պարզ պատճառով, որ «Առանց դեմոկրատական վերահսկողության չի կարող լինել այսաշխարհային և ոչ մի տրամաբանություն, թե ինչու ցանկացած **կառավարիչ** չպետք է օգտագործի իր քաղաքական և տնտեսական իշխանությունը խիստ տարբեր նպատակներով, քան իր քաղաքացիների ազատությունը պաշտպանելն է»³³:

Դեմոկրատական հասարակությունը կարող է իրականացնել (կամ առնվազն եղածից ավելի լավ) այս վերահսկողությունը, եթե նախ՝ խորապես գիտակցի, որ ինքը, որպես հանրային (կոլեկտիվ), ծառայության է ընդունել ոմն քաղաքացու (կամ քաղաքացիների)՝ որպես **կառավարիչ**: Իսկ այս **կառավարիչը**, իր «գործատուի» ծախսերի և ջանքերի շնորհիվ, ապահովված է մարդ արարածի համար հնարավոր ազատության ամենաբարձր մակարդակով:

Ա. Բեռլինը քննարկում է ազատության երկու ըմբռնում. ազատություն՝ ինչից (բացասական) և ազատություն՝ հանուն ինչի (դրական): Բացասականի դեպքում խոսքը կարիքներից ազատ լինելու մասին է, որի առկայությամբ է արժևորվում և իրականանում դրական ազատությունը³⁴: Այսու, դեմոկրատական **կառավարիչը**, օրենքով սահմանված և լեգիտիմ կարգով, ապահովված է բացասական ազատությամբ, և այս ապահովումը հետապնդում է բացառապես մեկ նպատակ՝ ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի իրականացվի կառավարումը: Ուրեմն, **կառավարիչը** բարոյական ոչ մի իրավունք չունի ինչ-որ պահ կառավարմամբ չզբաղվելու: Ըստ ամենայնի, **կառավարիչը** գտնվում է գերեզմարված մարդու կարգավիճակում:

Այն, որ դեկավարը փաստացի ավելի է սահմանափակված, քան ենթակաները, ո՛չ նորություն է, ո՛չ էլ դեմոկրատիայի մենաշնորհը: Ջ. Ֆրեզերը բազմաթիվ օրինակներով փաստարկում է, որ գրեթե բոլոր ժողովուրդներն էլ իրենց պատմության ընթացքում ինչ-ինչ հավատալիքների պատճառով խստագույնս հետևել են, որպեսզի իրենց **կառավարիչը** (թագավորը, կայսրը, առաջնորդը) «... մեծագույն նախագգուշություններ կիրառի, և նրա ողջ կյանքը, ամենաաննշան մանրուքներով հանդերձ, պետք է կարգավորված լինի...»³⁵: Եվ դեմոկրատական, և՛ ոչ դեմոկրատական կառավարչի ազատությունների սահմանափակությունը բխում է իրենց իշխանություն տվող միևնույն աղբյուրից. դեմոկրատական կառավարչի իշխանությունը վավերականանում է համաքաղաքացիների ընտրությամբ, ուստի հենց դրանով էլ սահմանափակվում է: Ոչ դեմոկրատական՝ տոհմական-արյունակցական կառավարչի իշխանությունը վավերականանում է ավանդությամբ, և դրանով էլ սահմանափակվում: Եվ եթե տոհմատիրական կարգի **կառավարիչը** (թագավոր, իշխան, տոհմի ավագ և այլք), ենթադրենք չլինելով տվյալ ավանդության դավանորդ՝ բարոյական իրավունք ունի հրաժարվելու և՛ գահից, և՛ սահմանափակումներից, ապա դեմոկրատական կառավարիչն այդ իրավունքից խսպառ զրկված է. տոհմական կառավարչին ի ծնե պարտադրել են, իսկ

32 Նույն տեղում:

33 Նույն տեղում, էջ 335:

34 Տե՛ս Berlin I., Two Concept of Liberty, New York, "Oxford University Press", 2002, էջ 171 – 172:

35 Ֆրեզեր Ջ. Ջ., Ոսկե ճյուղը: Միգրության ուսումնասիրություն, Եր., «Հայաստան», 1989, էջ 204:

դեմոկրատականն ինքն է ընտրել և պնդել: Ուրեմն դեմոկրատական **կառավարիչն** անդադար պետք է աշխատի: Ուստի, եթե դեմոկրատական **կառավարիչը** ոչ ընտրողների պահանջով օգտվի հրաժարական տալու օրենքով սահմանված կարգից, պետք է համաքաղաքացիների կողմից ենթարկվի բարոյական ծանրագույն պարսավանքի՝ համարվելով դավաճան:

Երկրորդ՝ դեմոկրատական հասարակությունը պետք է մշտապես հիշի և հաշվի առնի, որ ինքն իր կառավարչին վճարում է անհամեմատ շատ, քան նա կարող է աշխատել (վերադարձնել), ուստի այն քաղաքացին, ով գոհունակության խոսք կասի կառավարության մասին, բարոյականության տեսանկյունից պետք է համարվի իր իսկ նկատմամբ անարդարության ջատագով՝ հիմար: Իսկ օրենքի տեսանկյունից այդ քաղաքացին պետք է գրավի օրինապահ մարմինների ուշադրությունը որպես խիստ կասկածելի վարքի տեր մարդ՝ կամ խելագար, կամ դեմոկրատիայի դավադիր: Դեմոկրատական **կառավարիչն** ունի մամլո խոսնակ և/կամ հասարակայնության հետ կապերի մի ամբողջ գրասենյակ, որի գործունեության բուն նպատակն ըստ ամենայնի կառավարչի գործունեությունը դրական լույսի ներքո ներկայացնելն է: Եթե հասարակական ճնշումը թեթև լինի, ապա անկախ (ոչ ընդդիմադիր) լրատվամիջոցների համար խիստ դժվար է լինելու կառավարչին վերաբերող լրատվության հարցում օբյեկտիվության պահպանումը:

Վերջապես՝ դեմոկրատական հասարակությունը պետք է իր կառավարչին մտայնության մակարդակում օժտի ծայրահեղ սխալականությամբ (Ֆալիբիլիգմ): Այսինքն՝ դեմոկրատական հասարակությունը պետք է վստահ լինի ոչ միայն այն բանում, որ իր **կառավարիչը** սխալական է և կարող է սխալվել, այլև որ նա անպայման սխալվելու է, ու սա բացառապես ժամանակի և/կամ պայմանների համընկնելու խնդիր է:

Իսկ երբ սխալը հայտնաբերվի, անկախ կառավարչի՝ իր կատարած սխալի գնահատականից, ընտրագանգվածը պետք է որոշի՝ արդյո՞ք տվյալ սխալից հետո **կառավարիչը** շարունակում է մնալ իր լիազորություններում, թե՛ ոչ: **Կառավարչի** լիազորությունները կարող են դադարել առանց այլ պատժի առկայության, եթե նա օրենք չի խախտել: Հնարավոր է նաև հակառակը. **կառավարիչը** կարող է պատժվել՝ շարունակելով կատարել իր պարտականությունները, և այս ամենը պետք է որոշի բացառապես դեմոկրատական հասարակությունը՝ քաղաքացին: Քաղաքացու պահանջ-որոշումները կարող են լինել իռացիոնալ, կարող են լինել ոչ նպատակահարմար, և նույնիսկ՝ անբարոյական, սակայն **կառավարիչը** պարտավոր է հաշվի նստել դրանց հետ ու կատարել դրանք՝ ելնելով արդարությունը փոքր-ինչ վերականգնելու միտումից, քանի որ, ինչպես տեսանք, կառավարչի կամ ցանկացած իշխանության առկայությունն ընդհանրապես ո՛չ ռացիոնալ է, ո՛չ նպատակահարմար, ո՛չ էլ բարոյական. այն փաստացի մարդու նախաքաղաքական իրավունքի նեցեցիտարիստական ոտնահարում է և դրա՝ որպես բարձրագույն արժեքի նսեմացում:

Այս ամենից զատ դեմոկրատական հասարակությունը (սա, թերևս, ամենակարևորն է) ինքն իրեն պետք է օժտի **լեգիտիմ սխալականությամբ՝** մտային-իդեալական մակարդակում այն հասցնելով քմահաճության աստիճանի. **դեմոկրատական հասարակությունը պետք է խորապես համոզված**

լինի, որ ցանկացած պահի ինքը կարող է և պետք է պատասխանատվության ենթարկի իր կառավարչին, ընդ որում, պատիժն անհամեմատ մեծ պիտի լինի, քան կատարված ցանկացած զանցանք: Իսկ եթե կառավարչի կողմից առկա է նենգավոր միտում, ապա պատիժը պետք է գերազանցի տվյալ պահին երկրում իրականացնելի բոլոր պատժաձևերը:

Այս ամենը որպես հանրային տեղեկատվություն պետք է անընդհատ մատուցվի դեմոկրատական ողջ հասարակությանը, և սա պետք է տեղի ունենա իշխանության ուղղակի հովանավորությամբ: Այս գործունեությամբ հենց իշխանությունը կփաստի, որ ինքը նույնպես համաձայն է պոպերյան այն սկզբունքին, ըստ որի՝ **«... պետությունը պետք է միշտ հասկացվի՝ վտանգավոր, սակայն անհրաժեշտ չարիք** (ընդգծումը մերն է – Գ.Ը.)»³⁶: Ուստի, դեմոկրատական հասարակության՝ իշխանությունից «գոհունակության» միակ ձևը մնում է լռությունը: **Եթե հասարակությունը, այս մտայնությունն ունենալով հանդերձ, ընդհանրապես չի հետաքրքրվում քաղաքականությամբ, ուրեմն հանդուրժելի է տվյալ իշխանության գոյությունը:**

Այս ըմբռնումների արմատավորումը և հարատև հիշեցումը պետք է իրականացվեն իշխանության ինստիտուցիոնալ աշխատանքով: Իսկ «Դեմոկրատական ինստիտուտները չեն կարող զարգացնել իրենք իրենց: Դրանց զարգացնելու խնդիրը, մշտապես, առավել անձնային է, քան ինստիտուցիոնալ»³⁷: Այսու, իշխանությունը պետք է հանրային բոլոր կառույցներում (անհատական) աշխատանք տանի, որպեսզի բոլորի և յուրաքանչյուրի մտայնության մեջ ամրագրվի այս անարխիստական ու ծայրահեղ պահանջատիրական վերաբերմունքը:

Սրանով իշխանությունը կապահովագրի իրեն ավտորիտարիզմից և, ի դեմս տվյալ հասարակության, կձևավորի ազատ ու երջանիկ հասարակության հավաքական պաշտպանի: Հակառակ դեպքում միշտ ակտուալ կլինի Պ. Կրոպոտկինի ընդվզումը՝ **«Տպագրության և հավաքների ազատությունը, ընտանեկան օջախի սրբազնությունը և այլն գոյություն ունեն բացառապես այն պայմանով, որ ժողովուրդը չկիրառի դրանք՝ ընդդեմ արտոնյալ խավի: Հենց այն նույն օրը, երբ ժողովուրդը սկսում է օգտվել դրանցից, որպեսզի խափանի կառավարող խավերի արտոնյալությունները, այս ողջ այսպես կոչված իրավունքները բալաստի պես տախտակամածից նետվում են դուրս** (ընդգծումը մերն է – Գ. Ը.)»³⁸:

Գևորգ Գ. Հակոբյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ճշմարտության և արդարության հիմնահարցերը, միջգիտակարգային և հոգևոր մշակույթի ձևերի միջև առկա հակասությունները: Ունի մեկ տասնյակ գիտական և հրապարակախոսական հոդվածներ և մեկ մենագրություն:

36 **Popper K. R.**, The open Society and Its Enemies, Princeton, "Princeton University Press", 2013, p. 338.

37 Նույն տեղում, էջ 120:

38 **Кропоткин П. А.**, Этика: Избранные труды, М., «Политиздат», 1991, с. 391.

Summary

PHILOSOPHICAL CRITIQUE OF DEMOCRACY

Some problems and their possible solutions

Gevorg G. Hakobyan

Key words – democracy, authoritarianism, governor, power, dictatorship, freedom, justice, truth, happiness, control, anarchistic attitude, antipod of truth, distribution of goods, democratic society.

The article presents a number of principled deficiencies in democracy related to justice and truth. The author agrees beforehand that, despite the fundamental shortcomings of democracy, it has been and remains the best form of organizing and managing the society. In this article the auther attempts to find the means and ways by which it is possible to neutralize the deficiencies of democracy. Those means are anarchistic mentality and the demanding position of the members of the democratic society.

Резюме

ФИЛОСОФСКАЯ КРИТИКА ДЕМОКРАТИИ

Некоторые проблемы и их возможные решения

Геворг Г. Акопян

Ключевые слова – демократия, авторитаризм, правитель, власть, диктатура, свобода, справедливость, истина, счастье, контроль, анархистское отношение, антипод истины, распределение добра, демократическое общество.

Статья выявляет ряд принципиальных недостатков демократии в соотношении справедливости и истины. Автор изначально соглашается с идеей, что несмотря на наличие принципиальных недостатков в демократии, она была и остается наилучшей формой организации общества и правления им. В данной статье производится попытка указать способы и средства, благодаря которым возможно нейтрализовать недостатки демократии. Этими средствами являются анархистское мышление и требовательная позиция членов общества.

ՀԻՄՆԱԳԱՐՈՒՄ

ԺԱ (ԺԷ) ԳՄՐԻ, ԵՐԻՂ 2 (66), ԿՄՐԻՂ-ԽՈՒՆԻ, 2019

ՎԼՎ ԽԱՆԽԱՅԻՆԻՉԻՅԱՆ ԽԱՆՐԵՆ

REFERENCES

1. **Acton J. E. D.**, Essays on Freedom and Power, Boston, "The Free Press", 1949.
2. **Bakunin M. A.**, Filosofija. Sociologija. Politika, Moskva, "Pravda", 1989 (**in Russian**).
3. **Berlin I.**, Two Concept of Liberty, New York, "Oxford University Press", 2002.
4. "General Introduction", Truth: Engagements Across Philosophical Traditions, edited by Medina J. and Wood D., **Medina J.** and **Wood D.**, Blackwell Publishing 2005.
5. **Frezer J. J.**, Vo'ske c'yugh'ə, Mogutyany usumnasirutyun, Ye'r., "Hayastan", 1989 (**in Armenian**).
6. **Kinna R.**, Where to Now? Future Directions for Anarchist Research, The Continuum Companion to Anarchism, New York, "Continuum International Publishing Group", 2012.
7. **Kropotkin P. A.**, Etika: Izbrannye trudy. – M., "Politizdat", 1991 (**in Russian**).
8. **Maqiaveli N.**, Ye'revan, Hegh'inakayin hratarakutyun, 2010 (**in Armenian**).
9. **Monten M.**, Pordz'er, Ye'r., "Hayastan", 1991 (**in Armenian**).
10. **Newman S.**, Research Methods and Problems: Postanarchism, The Continuum Companion to Anarchism, New York, "Continuum International Publishing Group", 2012, p. 41.
11. **Platon**, Petut'yun, Ye'rker ch'ors hatorov, hator IV, Ye'r., "Sargis Xach'enc: Printinfo: Antares", 2017 (In Armenian).
12. **Popper K. R.**, The open Society and Its Enemies, Princeton, "Princeton University Press", 2013
13. **Proudhon P. J.**, What is Property?, Cambrige, "Press of John and Son", 1876
14. **Sorokin P. A.**, Social And Cultural Mobility, New York, "Harper & Brothers", 1941
15. **Stuart J. M.**, Utilitarianism, Kitchener, "Batoche Books", 2001
16. "Qagh'aqakanut'yan yev' iravunqi goyabanakan himqerə", Sion, Pash'tonat'ert' Ye'rusagh'emi Hay Patriarqutean, xmbagir' – T. Nerseh Abegh'a Aloean, **Yakobean G. G.**, Ye'rusagh'em, "Tparan Srboch Yakobeanc", 2017, yulis – dektember (**in Armenian**).
17. "Truth and Politics", Truth: Engagements Across Philosophical Traditions, edited by Medina J. and Wood D., **Arendt H.**, Cornwall, "Blackwell Publishing", 2005.
18. **Walzer M. L.**, Spheres of Justice, A Defense of Pluralism and Equality, Printed in the United States of America, "Basic Books", 1983.